ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/66

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գրիհով Գեո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 14.08.2021թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Երևան քաղաքի պոլիկլինիկաների (թիվ 15, թիվ 16 և թիվ 20) վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից 16.08.2021թ. ներկայացված (17.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/66 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Գրիհով Գեո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գրիհով Գեո» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.08.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1.1. «Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) Երևան քաղաքի պոլիկլինիկաների (թիվ 15, թիվ 16 և թիվ 20) վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.07.2021 թվականին հրապարակել է թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» գնանշման հարցումը (այսուհետ նաև գնման ընթացակարգ).

1.2. Գնման ընթացակարգին մասնակցության հայտ (այսուհետ նաև հայտ) է ներկայացրել նաև «ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից).

1.3. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2021 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անճշտություններ՝ «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին:

1.4. Պատվիրատուի կողմից Մասնակցին չի ուղարկվել պատշաճ ծանուցում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ: Պատշաճ ծանուցումը չի ապահովվել երկու եղանակով, նախ ծանուցումը չի ուղարկվել Մասնակցին կամ այն չուղարկելը եղել է էլեկտրոնային կապի խափանման արդյունք, իսկ հրապարկված արձանագրությունից պարզ չի եղել, թե՞ «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում ինչ անհամապատասխանություն է առկա, Մասնակցի կողմից պահանջվել է պարզաբանում, որին ի պատասխան 11.08.2021 թվականին էլեկտրոնային հաղորդագրությունը կրկին փոխանցվել է, որը պարունակում է արձանագրային որոշման նույնաբովանդակ հաղորդագրություն:

1.5. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2021 թվականի թիվ 4 արձանագրային որոշմամբ Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, հայտում՝ «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշների բացակայության հիմքով:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցի հայտի անբավարար գնահատման և մերժման համար սահմանել է հետևյալ վավերապայմանների միաժամանակյա պարտադիր առկայությունը.

- արձանագրված է անհամապատասխանություն,
- հանձնաժողովի կողմից կասեցված է նիստը կասեցված է մեկ աշխատանքային օրով և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ապահովել է ծանուցումը մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- և եթե անհամապատասխանությունը մասնակցի կողմից չի շտկվել:

Այսինքն Մասնակցի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու համար, նախ Պատվիրատուն պետք է գործի օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, կատարի սահմանված պարտավորությունները, որի պարագայում նոր միայն հնարավոր կլինի փաստել Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանության շտկման պարտավորության ծագման փաստը: Ընդ որում

արձանագրված անհամապատասխանության մասին Մասնակցին ծանուցելը ինքնանպատակ չէ, օրենսդիրը նշված դրույթի սահմանմամբ նպատակ է հետապնդել ապահովելու թափանցիկ և արդար մրցակցությունը, հակառակ պարագայում Պատվիրատուի գործողությունները կլինեն անվերահսկելի, իսկ հայտերը կմերժվեն սուբյեկտիվ գնահատմամբ:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ մասնակցի կողմից գնման ընթացակարգի ընթացակարգի շրջանակում ներկայացվել է մասնակցության հայտ: Թեպետև գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.08.2021 թվականին թիվ 3 արձանագրային որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը և մասնակցն առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն ըստ էության չպահպանելով Կարգի 41-րդ կետի պահանջները: Անհամապատասխանության արձնագրմամբ գնահատող հանձնաժողովը պետք է բավարար հստակությամբ սահմանի դրանք, որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենա շտկելու դրանք, հակառակ պարագայում հայտում առկա անհամապատասխանության շտկման ինստիտուտը չի ծառայի իր նպատակին: Սույն դեպքում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցին պահանջել է շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, հստակ չմատնանշելով, թե՞ «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում ինչ անհամապատասխանություն է արձանագրվել: Գնահատող հանձնաժողովի կողմից միայն ընդհանրական մեկնաբանությամբ նշվել է, որ «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, որի պարագայում հնարավոր է չէ որոշակիորեն արձանագրել առկա անհամապատասխանությունը և Մասնակցին ուղղված պահանջը, որով պայմանավորված Մասնակիցը չի կարողանում իրա վարքագիծը համապատասխանեցնել իրեն ուղղված պահանջին: Ինչպես նաև գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.08.2021 թվականի թիվ 4 արձանագրային որոշմամբ մերժվեց Մասնակցի հայտը, այն հիմքով, թե՞ իբր չի ներկայացվել «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները: Նախ հայտնեմ, որ նշված ակնհայտ ոչ ճիշտ տեղեկատվություն է, քանզի Մասնակցի կողմից ներկայացվել են «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները և այն Գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ վարքագծի շարունակություն է, արձանագրելով

անհամապատասխանություն Մասնակցին չի ծանուցում, այն մասին, թե՞ ինչպիսի անհամապատասխանություն է արձանագրել «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում և հետագայում մերժում Մասնակցի հայտը մեկ այլ հիմքով, թե՞ իբր չի ներկայացվել «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները:

Ամփոփելով նշեմ եմ, որ գնման ընթացակարգի շրջանակում Պատվիրատուի/գնահատող հանձնաժողովի գործողությունները արձանագրված անհամապատասխանության շտկման պարագայում ուղիղ համեմատական են Մասնակցի գործողությունների հետ և երկկողմ պատշաճ կատարված պարտավորությունները նոր միայն կարող են փաստել գործողությունների իրավաչափության մասին, իսկ մեկ կողմի ոչ իրավաչափ վարքագիծը խաթարում է շտկման ինստիտուտի առանձնահատկությունները: Սույն դեպքում Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցին հստակ չի ծանուցել, թե՞ ինչպիսի անհամապատասխանություն է արձանագրել «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում, ըստ էության խոչընդոտելով այն շտկելու գործընթացին, նույնիսկ էլեկտրոնային հաղորդագրությունը պատշաճ չի ուղարկվել և այն ուղարկվել է Մասնակցի պահանջից հետո 11.08.2021 թվականին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին՝

1. Չեղարկելու 11.08.2021թ. թիվ 4 արձանագրային որոշումը,
2. «ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ին հստակ ծանուցելու «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներում արձանագրված անհամապատասխանությունների մասին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/66 բողոքի քննության նպատակով 20.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի պոլիկլինիկաների (թիվ 15, թիվ 16 և թիվ 20) վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրիհով Գեո» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից նեկայացված հայտում «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:
4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.08.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից 16.08.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ

պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի պոլիկլինիկաների (թիվ 15, թիվ 16 և թիվ 20) վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրիհով Գեո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից նեկայացված հայտում «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.08.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, ծանուցման մեջ նշելով, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից նեկայացված հայտում «մասնագիտական փորձառություն» և

«աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և կցելով 09.08.2021թ. թիվ 3 արձանագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում՝ ***մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:***

Մինչդեռ՝ վերը շարադրված փաստական հանգամանքների, մասնավորապես՝ Ընկերությանն ուղարկված ծանուցման և 09.08.2021թ. թիվ 3 արձանագրության ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են իր իսկ կողմից կազմված հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները***, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Գրիհով Գեո» ՍՊԸ-ի կողմից 16.08.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/45» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին՝

1. Դադարեցնելու 11.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությունը,

2. «ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ մանրամասն նկարագրելով հայտի գնահատման ընթացքում «մասնագիտական փորձառություն» և «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**